

գույքները, որոնցից առաքին բնակիչներէջ շատերը կարգապահ լազա-
տեյ իրենց կեանքը միայն հաշտի օգնութեամբ, թաքնուելով նրանց
տներում հէնց Դանձակի մէջ, ¹⁾ իսկ Աննէ Լիկեղցցիք փախան Թիֆ-
լիս, և միայն զոյքերը կորցրին։ Այս միջոցին (սեպտեմբերի 2-ին) հայ
ազգի Մատաթովը 2000 հոգի գորքով, եկա զհայ Զեազան և պա-
տանց 10—12 հազար պարտեյ գորքերի։ Միւս օրը, Զամբոր գետակի
մօտ տեղի ունեցաւ մի ահեղ կոխ, և պարսիկները 2000 զիակ և մեծ
աւար թողնելով պատերազմի զաշուում փախան զհայ Դանձակ և այս
բերդն էլ անխնամ թողնելով նահանջեցին մինչև Ղարաբաղ։ Ամսի
4-ին Մատաթովը մտաւ Դանձակ, որտեղ նրան ընդ առաջ եկան
տեղացին հայերն ու հայ հոգեւորականութիւնը խաչով ու խաչքիւտով ²⁾։

Այս միջոցին Պասկևիչը Կովկասեան զօրքերի ընդհանուր հրա-
մանաւորի պաշտօնը ստանձնելով իւր զօրքերով եկաւ Դանձակ և
սեպ. 13-ին քաղաքի առաջը եղան ընդարձակ զաշուում ճակատամարտ
տունց Արաս-Միքայիլ բազմաթիւ զօրքին և յաղթելով փախցրեց զհ-
այի Թափրիք։ Այս պատերազմի մէջ մեծ գործ կատարեց ինչպէս իշ.
Մատաթովը, այնպէս և հայոց հեծելազունը, Մանուկբեան Գրիգոր
եղիսկեպոսի առաջնորդութեամբ։ Այսպիսով Դանձակը կրկին մտաւ
Ռուսաց տիրապետութեան տակ և Պասկևիչի առաջարկով փերսի-
զունց Ելիսաւետայոյ, ի պատիւ Ելիսաւետա կայսրուհուն։ Այնուհետեւ
սկսեց կամաց կամաց զարգանալ և 1870 թուին զարժաւ համանուն
նահանգի նահանգական քաղաք։

ՀԱՅ ՄԵԼԻԺԱՆԻՆԵՐ

Դանձակի գաւառում եղել են Մելիք Տէկլարեան, Մելիք Մնա-
ցադանեան, Մելիք Զահնապարեան և Մելիք Ռոստոմեան մելիքները։
Սրանցից առաջինը իշխել է Եղիմիզոյր կամ Դուլիստան մահալին,
որ նախնի բաժանմամբ ընկնում է Ղարաբաղի խանութեան մէջ։
Այս մելիքութիւնը կազմում էր Խամաչ (հինգ) մելիքութիւն-
ներից մինը, որ սկզբներում բոլորովին անկախ, իսկ վերջերում են-
թարկում էր Ղարաբաղի խաներին։ Միւս մելիքութիւնները գտնու-
ում էին Դանձակի խանութեան մէջ և գրեթէ շարունակ աւորա-
գրում են եղել Դանձակի խաներին։ Սրանք այնքան էլ նշանաւոր
չեն եղան։

Տաղիսեանք սրանցից իւրաքանչիւրի պատմութիւնը։

¹⁾ НОВО. Кавказская война т. III. кн. I. ст. 101.

²⁾ Եղեցեան Աննայի հայոց կաթ. հ. II. էր. 261.

ՄՈՒԼԻԳ-ՔԷԿԼՈՐԵՍՆԵՐ.

Աւանդութեան աւելոյ՝ Մեղիք-Ռէկլարիաններէ առհը սերուած է Սև-Արօփց, որ տան է գեղերորդ զարի վերջում, յայտնի չէ թէ ինչ պատճառներով, իսկառ զաւարի Նիժ գիւղից զաղթում է Գիւլիստան, ուրիշ 7 ընտանիքի հետ է առ ժամանակ բնակում վրաններով Թաթ-բուրաղ (Դեմիտիան) գիւղում, հաստատապէս յայտնի չէ, թէ Սև Արօփ բուն Նիժեցի, (ուտի) է եղել, թէ Պարսից կամ Լեզգիների արշաւանքներից ստեղծուած՝ Թաթաւեկիս է եղել այն կազմերը:

Նոր զաղթում աւերակ գիւղատեղում Սև Արօփ, որ մի վիթխարի, հաստարազուկ է սեւերես մարդ է եղել՝ առժամանակ օրական ապրուստը հալթալթեկիս է եղել զգետաօրապէս որորդաթեամբ:

Մի օր, երբ մի սպանած եղջերու շալախած, հաստ մահալը ձեռին վերադառնում է վրանը՝ տեսնում է հեռուն, մի ծառի տակ, եռթը աւազակներ նստած: Սրանցից մինը ծոռեկում է Սև Արօփին, և ուզում է նրանից եղջերուն խել, բայց Սև Արօփը մահալի մի հարուածով նրան գետին է գլորում: Իսկոյն ընկերներից մինը օգնութեան է հասնում, բայց սա ևս նոյն վիճակին է ենթարկում: Յետոյ զալիս են հեղձնեալ միւսները, որոնց բոլորին էլ Սև Արօփը մահալի հարուածներով գետին է գլորում: Այս միջոցին վրաց են հասնում Բարտալի խանի մարդիկը, որոնք ուղարկուած էին հէնց այս աւազակներին բռնելու, և կապեալեղով նրանց՝ աւանում տանում են: Բարտալի խանը առատապէս փարձատրում է խը մարդկանցը, որոնք պատում են, իբր թէ իրենք են բռնել աւազակներին: Միևնոյն ժամանակ հասնալում է բանասարկել այնքան աւերածութիւններ անող աւազակներին, որպէսզի բաշտամի տուն անցնելուց յետոյ նրանց զգեստեն: Երբ հասնում է զգեստման օրը՝ աւազակները զիմում են խանին և ասում. «Պատիր մեզ, ինչպէս կամենումես, որովհետև չիբարի մեծ փասներ ենք տուել քեզ, բայց մի անգառուի մեղ, փարձաբերով այդ խաբերաններին, որովհետև մեզ բռնել է մի քաջ ողաւարդ Թուրքուլագում և ոյ թէ այդ փսխտանները»:

Իսկը անմիջապէս բերել է տալիս Սև Արօփին և երբ հարցնում է, թէ ինչ փարձաբերութիւն է ցանկանում խը քաբութեան համար՝ Սև Արօփը, որպէս զաղթեալան՝ բնակութեան տեղ է խլինդրում նրանից և ասանում է Թաթիշ կամ Թալիշ գիւղը, իտեկիայ վանքի ձառ:

Ելաքան է միայն յայտնի Սև Արօփի մասին, որի գերեզմանը

գանձում է նուեկայ փանքի ձառ և կրում է նայոց ԹՁԸ (1081—Փրփ-
Նախան 1632) Թառախնը, որ է Արոփի մեռած տարին:

Ան-Արոփին յաջորդում է Մելիք Եսաքին, որի անունը թէև չե-
լում է ժողովրդի մէջ, սակայն գործերի մասին ոչ մի ցեղատարու-
թիւն չկայ: Սրա գոյութիւնը հաստատում է և այն փաստով, որ Թա-
լիշ գիւղի Աւետարանի ցեղատարանում ասում են, թէ 1650 թուին
(կոր կազմել են Աւետարանը) Թալիշ գիւղում իշխան է եղել Ան Ա-
րոփի որդի մելիք Եսաքին:

Մելիք-Ասարուն յաջորդում է Մելիք-Բէկյար, որ քաղ և խեղա-
ցի անձնատրուիթիւն է եղել: Սա իսկում է այս կազմերի հին տիրա-
պետող Արաւան-Եղբաշուց (Երբաշիւմ-գեաւուր) միջանի գիւղեր, ինչ-
պէս են Վերի-շէնը, Ներքին շէնը, Երբէշը ևայն, նա տիրում է նաև
Գիւլատան ընդհին, վերանորոգում է և իւր բնակութիւնը այնպեղ
հաստատում: Նա ունենում է երեք որդի, մելիք Արոփ, որ յաջորդում
է իրեն, Մելիք Թաթաղ (+ 1750) և Եսայ-խան-աղա (+ 1752):

Մելիք-Բէկյար Ա-ին յաջորդում է անոց որդին՝ Մելիք-Արոփ Բ,
որ իւղ ձախնունն էր ստացել, որովհետև գնդակի հարուածից ոտքը
փաստակ էր:

Սա մի անգամ Գանձակ գնացիս շերմում է, ուստի իջնում է ձիուց
և Տալուզ (Ղարաուրախ գիւղի հանդէպ այժմ աներակ) գիւղի ձառ
մի ձառի սակ նստում է հանգչելու:

Այս միջոցին Գանձակի մեծ կալուածատէր Միրզա Մահմադ Մու-
սափի աջակի, գեղեցիկ Ղամար Սալթանը, աղաքիներով շրջապա-
տուած, գրանում է իւր հօր խաչների ձառ: Կաղ-Արոփը հէնց որ
տեսնում է նրան՝ մոռանում է իւր ջերմը, առեւանգում է և իւր ձիու
գաւակն առնելով փախցնում է Աննափրկիչ փանքը, ուր մկրտել է
սայիս և ամուսնանում հետը: Միրզա Մահմադ Մուսափան միջանի
անգամ իւր ձարգիւնցով գալիս է իւր աղջիկը իււով յետ իղկու-
տակայն Մելիք-Արոփը յաղթում է նրան և յետ գարմանու Վերջ ի
վերջոյ աները հաշտում է փեսայի հետ, և քաջի այլ աղջկանից ու-
րիշ ժառանգ յունենալով իւր բոլոր կալուածքները թողնում է նրան *):

Մելիք-Արոփ սուրը մեռին պաշտպանում է իւր ժողովուրդը լեդ-
զիների արշաւանքներից և երբ 1721 թուին, Պետրոս Մեծը աւանում
է Դերբէնը՝ Մելիք-Արոփն էլ իւր զօրքով գնում է Գանձակի ձառ
բանակած փայ Վախտանգ Թաղաուրի և նայոց միւս մելիքների ձառ,
որպէտքի առանների հետ միանալով, Թոթափին պարսկց լուծը:

Սակայն երբ Պետրոս մեծը յանկարծ յետ է դառնում, և Վախ-
թանգ Թաղաուրը շտապով վերադառնում է Թիֆլիս՝ Մելիք-Արոփը

*) „ՅԱՆՈՒՅԱ ՔԵՐ ԶՈՒՄԱՐՈՒՄՈՒՄՈՒ ՃԻՆ՝ ՄԱՅԻՆ-ԵՏԱՐՈՒՄՈՒՄԷ, որ
գանձում է պ. Ս. Մելիք-Բէկյարեանի ձառ:

Հայոց մեղիքների հետ ի միասին անդաշտագան մնալով, ջրում են իրենց երկիրները և ամրանում ամուր տեղերը, գրովհետեւ արդէն աստիկ զորակը էին Պարսից բարկութիւնը։ Սահայն Մեղիք-Արով չայտ չէ կորում ուսանների օգնութիւնից, ուստի երբ Յամանցիները անում են Թիֆլիսը, Երևանը և Նախիջևանը՝ 1723 թուի մարտի 10-ին Գանձասարի Յաջի կաթողիկոսի և Արաւամ, Յուան, Պաշի Իփան մեղիքների հետ թուղթ է գրում Պետրոս Մեծին, որի մէջ ասում է. «Այժմե որ մեր թուականս աճել է, մարտի ամսոյ մէկումն, 14700 հեծեալ սալ զօրուն եկին մեզ վրայ, 3 փաշայ էր, Զահեհ, Սալահ և Այի տունն Մէր էլ տեսանք, որ զատէն կռուելով չէ լինել, յառաջ գնացիւք զանալ արիւք, մեր գեղերանց վրայ բաժանեցինք, որն ընով, զճով, զճով, և եճով տեղ ու տեղ կոտորեցինք. ք. փաշան ևս սպանեցինք. Սալահ փաշան աջ պահան ունեւք. ապա մէկ ճՊ մարդ փախան քրեան. ԲՔ էլ տեղի քրքիտոնեալ Հսիք կայր աշատեցինք. Ահա այս արարք և գործ մեր ոչ թէ մերով կարողութեամբ է, աչ գրտ ամենայաղթ գորութիւնդ և օգնութիւն յուսալով, ապաւինեմք և համբերեմք սպասելով. այժմ այսուհետեւ մուշափաս նոցա մեծ զօրք և զօրուն կուգայ մեզ վրայ, եթէ փութանակի մեզ օգնութիւն և թիկունս ոչ հասցէ ի հզօրեղ, յատու կորտ ամենայն ազգս Հայոց քրիստոնէից բնաջինք անեկոյն են. խնդրեմք, աղաչեմք, ժողեմք, զի վասն անուան Քրիստոսի մի անտես արասցես զհաջողւանս մերս *):

Սահայն այս խնդրած օգնութիւնը ուշացաւ, լնայելով որ Մեղիք Արովը մի տարի առաջ, 1724 թուի փետրուարի 6-ին, իւր եղբոր, մեղիք Թաւրաղի և Աւան ա Միլլա Իզբաշիների ստորագրութեամբ դարձեալ գիման էր Պետրոս Մեծին և գրած. «Ահա մինչև ցայս Թաւրաղս թէպէտ յորից կողմանց Թշնամիք գօրեղք յարուցեալք կան ի վրայ մեր, ապա աստուծով և քոյին կարող զգրութեամբ և աղօթիւ ք զմեզ և զմեր մերձակալքս ողջութեամբ պահեալ եմք. թէպէտ կռուելով, և թէ աչովք հնարիւք և ակն ունեմք զի մինչև ի տէրութիւն քոյ առ մեզ հասանելն, կարողասցաւք պահել զմեզ ի Թշնամեաց մերոց քոյին գօրութեամբ և աղօթիւք, զի ամբալոյն տեղիս ժողովեալ կամք ի տեղիս տեղիս և զօրքն հանապաղ ի զալ Թշնամեաց եղեալ մարտնչին ընդ նոսա, և մեծա յուսով ակն ունիմք ողբաժութիւն և շափաղաթ քոյ փութով առ մեզ հասանելոյ և յորժամ մերձեցի զօրքն Թաւադարական ի սահմանս մեր, յայնժամ և մեք ելցուք ըստ խփու կարգութեան մերում զօրք ընդ առաջ զօրաց հզօրեղ..... և վասն այն այժմե ոչ արկաք ՚ի թիւ գնամար զօրաց մե-

*) Տե՛ս: Синодъ Имперіи Бѣнаръ отъ Арх. епархіалъ, отъ 418.

րոյ, զի յոյժ չիք և ցան են աստեանդ... բայց պահառութիւն զինոց պատերազմականաց յորով ունին» *):

Այս խնդրին ի պատահան Պետրոս Մեծը 1724 թուին նոյեմբեր 10-ին հրովարտած է ուղղում մասնաւորապէս Սուախ կաթողիկոսին, Աւան և Միլիքա Իզրաէլներին (լիլիանէք ինչու էք մուսուլման Մելիք Քամրապին, քանի որ նա էլ էր ստորագրել խնդրին) ամբողջ հայ ազգին ընդհանրապէս, որով առաջադրում էր գաղթել Փոսանքի Պարսիկներից խլած Կիլան, Մազանդարան և Քազա երկրները։ Բայց մեկիքները յանձն չեն առնում։

Մելիք Աբով Բ. մեռնում է 1728 թուին և որովհետեւ նրա որդին Յովսէփ կամ Խառփը զեռ պատանի էր, մեկիքութեան պաշտօնը ստանձնում է Մելիք Աբովի եղբայր Մելիք Քամրապը։ Սախչն սա չէ կառավարում որպէս Ժամանակաւոր խնամակալ իւր մատաղահաս եղբոր որդու, այլ որպէս երկրի խնաման տէր։ Եւ որպէսզի կարողանայ իշխանութիւնը ընդ միշտ վարել, պետւմ է ճնշել պատանի Յովսէփին, նրան հետո պահել գործերից և նոյն-խի մատուցում է նրա կեանքին վերջ զնեղ։ Այս Ժամանակներում Յովսէփը մօր հետ միասին ապրում էր Գիւլստան բերդում իսկ Մելիք-Քամրապը Լոռուի վանքի մօտ շինել էր մի գեղեցիկ ապարանք և բնակութիւն հաստատել։

Ծերունիները պատմում են, թէ մի ինչ-որ հարկահան է եկել՝ Գիւլստանի մահալլան էլ հարկ հաւաքելու։ Մելիք Քամրապ ամենայն կերպ նպաստել է նրան և նոյն-խի տասախի գողնել է նրա մօտ իւր հանդուցեալ մելիք եղբոր հրացանը, որ գտնուելիս է եղել նրա որդու՝ պատանի Յովսէփի մեռլինը նարկահանը՝ կանչում է Յովսէփին, խնդրում է ցոյց տալ հրացանը և խլում է նրա մեռլինը։

Երբ Յովսէփը լսելով զնում պատմում է այս անցքը իւր մօրը՝ սա տասախի յանդիմանում է նրան, որ հօր ցեղասուրբ աղապէս հեշտութեամբ թողել է մեռլինը։

Յովսէփը տասախի յուզւում, միւրիչ փող է խնդրում մօրից և զէնքեր առնելով իւր միջանի երիտասարդ ընկերներով հետեւում է հարկահանին։ Իրր յարմարեան նշան որոշում է «ձկնու», իսկ գաղաթման՝ «մկնու»։ Խառքերը։ Երբ հարկահանը մտնում է Քարթաւի նեղ մօրը՝ Յովսէփը «ձկնու» գոչելով յարմարում է նրա փրա, կարում նրա զլուխը և խլում իւր հօր հրացանը **), ընկերներին (յ յարմարում են

*) Անդ. եր. 367. Այս գողնալը չուսնում միւս մտով մ... զմիւրից

**) Այս հրացանը Մելիք-Բէկապետների ժառանգները գահաւել են զենեալ երմուզին հազար թուրով, և սա ուղարկել է Պետերբուրգի Ահմէթի մազեւումը։

չորեպանների վրայ և բոլորին կոտորում. Ազա Կարիաճանի հառաքան թոկներն առած՝ վերադառնում են Գուլիստան բերդը *).

Յովսէփը երեսասարգութեան հասնելով՝ բարեկամանում է Զրաբերդի Մելիք-Ազամի հետ, որ թշնամի էր Մելիք Թամրազին, և նրա խորհրդով ու օգնութեամբ յարձակում է Մելիք Թամրազի ապականքի վրայ, մի քանի օր կռուելուց յետոյ սանում է ապարանքը և բռնում Մելիք-Թամրազին. Իսկայն հրամայում է նրան կախել յինարի **).

Յուսից և իրեն հռչակում է մելիք. Մելիք Թամրազը թողնում է երկու որդի, Դանիէլ, որ թէև կրում էր մելիքի տիտղոսը, բայց մելիքութիւն չէր սնում և Սարուխան-բէկ, որ 1723 թուի հայոց գնաւորի յորս քաջ զորապետներից մինն էր.

Այնուհետև Մելիք Յովսէփը, սերտ միացած Զրաբերդի Մելիք-Ազամի հետ՝ գործում է Փանահ-խանի դէմ.

Երկու խօսք սրտ ծախին, Փանահ-խանը Զուանշիրի թուրք ցեղի Սարիքալլու առնմից էր, առ թէ հրանում չա՛հի մոնեաթիկ պաշտօն էր կատարում, երբ մի անկարգութեան համար զլրատման զատապարտուեց, ուստի փախաւ եկաւ Զրաանշիր. Աջտեղից նա դիմեց Զրաբերդի Մելիք-Ալլահ-Ղուլի-սպիթանին և նրա ծառ զարմաւ հարկահան (տուրքեր հաւաքող). Թէև Պարխատանից մի քանի անգամ պահանջեցին, որ Փանահին բռնեն և յետ ուղարկեն, սակայն Մելիք-Ալլահ-Ղուլի սպիթանը պաշտպանեց նրան.

1747 թուին նազիր-չա՛հը սպանուեց և զահաժառանգութեան համար կռիւներ ծագեցին, որից օգտուելով նազիրի Խորասան տարած Զիլանշիրցի զաղմախանները վերադարձան իրենց հայրենիքը—Ղա-

*) Քաղմարդիւն Բաֆֆին իւր „Պատմայի-Մելիքութիւններ“-ի մէջ (եր 17). այս անցքը պատմելով՝ Կարիաճանին Միրզա-Թա՛հիր է կոչում, և Զահ-Սուլթան Եուսէփին զահրէկեցութեան միջոցին վերադարձում. Մեղ թւում է, թէ այստեղ մի ժամանակագրական սխալ պիտի լինի, որովհետև Մելիք Յովսէփի խոյրը Մելիք-Ազամ Բ. զախմանուեց է 1728 թուին, երբ արդէն Զահ-Սուլթան Եուսէփը զախմանուած էր (1723 թուին) և այս կողմերը 1723 թուից բնկած էին Պատմեցիների իշխանութեան ներքոյ:

Զէմարդա է, Միրզա-Թա՛հիրը եկել է Ղարաբաղ և Դանեակ Կաղկ հաւաքելու, սակայն այս եղել է 1702 (ՌՃԴԸ) թուին, ինչպէս վկայում է Եւսայի հաթթադիկար (եր. 47), և Միրզա-Թա՛հիրն էլ իւր Կեա 1100 ծաղ. է ունեցել, որոնց պատանի. Յովսէփը չէր կարող չարդել: Կարծում ենք, որ այս Կարիաճանը օտմանցիներից է ուղարկուած եղել և եթէ Յովսէփը անպատիժ է մեացել՝ պատճառն այն է եղել, որ նայն գաւառները կրկին Պարսից ձեռքն են անցել:

**) Այս յինարի Ծառը կոչւում է Ղահլուլ-յինար (արիւնալից յինար) որից արժւ միայն կանգնելն են մեացել:

բարացի անապատները, Զառի Փանահը անմիջապէս գնաց նրանց ծառ և կարճ միջոցից հրատարեցնել տուեց նրանց նախկին սահմանադրին և ինքը ընտրուեց, Ըս երբ Ազգի-շահը թագաւորելով, Ըմիր-Ապան-խանին ուղարկեց Ղարապաք խաղաղացնելու՝ Զառի Փանահը ընծաներ տալով՝ նրա միջնորդութեամբ շահից տուցաւ խանի տիտղոս։

Քիփանչիքցիները թափառական խաշնարածներ լինելով՝ սեփական երկիր չունէին՝ նրանք ձմեռը թափառում էին Կար գետի աջ ափի տափարակներում, իսկ ամառը բարձրանում Ղարապաքի լեռները, որոնք հայ մեղիքների իշխանութեան տակ գտնուելով՝ Քիփանչիքները ստիպւած էին սփարներէջ տասանորդ տալու, Փանահ-խանը ջանկանում է այս լեռներից մինի վրայ մի հաստատուն տեղ ունենալ, ուստի և գնում է Բաղաթ (Կարգար գետի ծառ) և սկսում մի բերդ շինել, Բայց Գիւլիստանի մեղիք Յովսէփը և Զարսերդի Մելիք-Ալլահ-Ղույի սպիթանը Քիփանի չափ-Չելէրի կռուականքի հետ յարձակում են այդ բերդի վրայ և հիմնադրաւոր անում։

Յնույ Փանահ-խանը փորձում է Թարնափուրա (Տէրյանափերա) աւերակների վրայ մի ուրիշ բերդ կառուցանել, որը կոչում է Ասկարան Սափայն Գիւլիստանի Մելիք-Յովսէփը, Զարսերդի Մելիք-Ալլահ-Ղույի-սպիթանը և Խաչէնի խաան Զալպեան Մելիք-Ալլահ-փերդին զարմեալ քանդում են այդ բերդը, որովհետև իրենց երկրների սահմաններին ծառ էր գտնւում։

Այսպէս՝ մինչդեռ հայ մեղիքների միաբան զորմունեութիւնը ի գերեւ էր հանում Փանահ-խանի բոլոր յոյսերը և նա չէր կարողանում ոչ մի տեղ հաստատուիլ՝ մի տխուր գէղջք եկաւ խանդարելու այդ միաբանութիւնը և նրաասելու Փանահ-խանին՝ ոչ միայն հաստատուելու հայ մեղիքների երկրի սրտում, այլ և իշխելու նրանց վրայ։

Ղարանդապի իշխող Մելիք Յովսէփի եղբայր Մելիք-Ջահնազար Բ, որ փրկին աստիճանի անբարոյական մարդ էր և միաժամանակ երկու կնոջ հետ էր ամուսնացել, սաւանում է խոր եղջորը Մելիք-Յովսէփին և նրա տեղ ինքը մեղիք գտնւում։ Այս անիրաւութիւնը պատժելու համար Գիւլիստանի Մելիք-Յովսէփը, միացած Զարսերդի Մելիք Խրաչելեան Ալլահ-Ղույի-սպիթանի, Խաչէնի Մելիք-Ալլահ-փերդու և Դիզակի Մելիք Աւանեան Մելիք Սաափի հետ՝ պաշարում է նրա Աւետարանաց ամրոցը։ Սափայն ձմեռը վրայ համեկով՝ նրանք չեն կարողանում ամրոցը աւնել, այլ միայն տեքելով և աւարելով չորհակայ գիւղերը՝ չեա են քաշւում, գարունքին կրկին յարձակուելու պայմանով։

Էկեց որ սրանք հետանում են՝ Մելիք-Ջահնազար Բ բոլորովին անհարաջած և անօգնական մնալով՝ ձեռք է մեկնում Փանահ-խա-

նրն և նրա խորհրդով 1732 թուին հիմնում է Ջուշի բերդը, միանգամայն պատերազմ մղելով զաշնակից մեկիքների դեմ:

Այս պատերազմները տեւեցին ծառ քսան տարի, որի ընթացքում Փանահ խանը թէև յաղողեցրեց զաւանանութեամբ սպանել տալ Խաչինի Մեկիք-Ալլահվերդուն և նրա մեկիքութիւնը Խնձորքետան զիւզի տանուտէր՝ զաւանան Միրզախանին յանձնելով (1735 թ.), Խաչէնը իրեն հպատակ և զաշնակից զարմնել՝ թայց և աջակէս՝ յարողացաւ միւս երեք զաշնակիցներին ընդդէմադրել և ստիպուեց հաշտութիւն խնդրել Բանակցութեան համար որոշուեց զնայ մի յէզր անդ՝ Աւարասայ փանքը: Այտեղ եկաւ Փանահ-խանը իւր սիրելի Մեկիք-Ջահնաբար Բ հետ և բանակեց հայ մեկիքների հաւատարմատար Զրաբէրդի Ալլահ-Ղուլի-սոթմանի հետ, որին նախկինահա Նէշար-Ղուլի-խանի զոգմամբ և հախառակ իւր գրամ պաշտածին, կայանաւորեց, տարաւ Ջուշի բերդը և զիւստեց (1736): Ալլահ-Ղուլի սոթմանին յաջորդեց երբայցը՝ Մեկիք-Ալամը, որ աւելի սերտ կերպով միացաւ Գիւլիստանի Մեկիք Յովսէփի հետ և աւելի ոխերիմ կերպով սփսեց կռուել Փանահ-խանի դէմ: Մեկիք-Ալամը ժառկութեան հասակից պատանեղ էր եղել Դաղստանի Խուրով սոթմանի ծառ և յաւ փարժուել էր ընծաականներով պատերազմական կարգերին, նրան աջակց էր Նադիր-շահն ընդ այս Մեկիք Ալամը, իւր եղբոր ժառուան փեթխնդիր լինելով միացաւ Գիւլիստանի մեկիք-Յովսէփի հետ, ամրացաւ Քերմանայ բերդում և սփսեց պատերազմել Փանահ-խանի հետ, Այս պատերազմը ամբողջ չորս տարի տեւեց և մեծամեծ զնանք տուեց Փանահ-խանին *):

Փանահ-խանը հպատակեցնելով Խաչէնը և զիջելով Զրաբէրդը իւր նշանաւոր պաշտպանից՝ կարծում էր, թէ արդէն քոյորդին թույլացրել է միւս մեկիքների ոչոք, ուստի և մարդ ուղարկեց Գիւլիստանի մեկիք Յովսէփի ծառ և խտուի պահանջեց հպատակութիւն: Մեկիք Յովսէփի քաջ փեթխարբ և զիւրաբորբաբ որդին, Բէկխարը թոյլ չտուեց իւր հօրը պատասխանելու, ասելով, թէ ինչքը կտայ Փանահ-խանի պատասխանը և ապա իւր թուրը բռնելով պատգամաւորի զոյլի փայ, ստիպեց կուլտալ նրանմաղկիր: Եւ երբ նա սարսափած կուլ տուեց թղթի վերջին կտորը՝ Բէկխարը ասաց, «Ո՛հ զնա այժմ, այստեղ կերամից արտադրութիւնը կրկին Փանահ-խանի պատասխանը...»

Այս խօսքերից փրգափում՝ Փանահ-խանը շարունակեց աւելի խտաւթեամբ պատերազմել, սակայն զաշնակից հայ մեկիքների—Գիւլիստանի, Զրաբէրդի և Տիգակի—գործերը շարունակ պաշարման մէջ էին պահում Ջուշու բերդը:

*) Այդպէսզայ եր. 14—15. Հնարակալութիւն եմ յայտնում պ. Է. Երեցեանին, որ բարենակց այս մեաւորիքը տալ ինձ պատուելու:

Այս միջոցներում (1761 թ.) Դարաբաղ եկաւ Սարգիսի Ամբար Պաթալի-խանը, որ Լազիկ-շահի քաջ զորավարներից մէկն էր և նրա մահից յետոյ արի ոյժով հնազանդեցեղ էր ամբողջ Աւրդառանիւր։ Իսկոյն Գրգխաւանի մեղիք-Յովսէփը և Զարգրդի մեղիք Ալանը մահուում են նրա հետ և բանակ գնելով Խաչապու գետի ափին՝ ամբողջ զեց ամա շարունակ պաշարում են Զուշու բերդը։ Վերջապէս Փանահ-խանը և Մեղիք Զահնազարը անձնատուր են լինում։ Բայց Պաթալի-խանը փախանակ իւր խառանան համեմատ այդ երկուսին հայ դաշնակից մեղիքներին յանձնելու, որ ինչպէս կամենան աշնպէս վարուեն նրանց հետ՝ տասը Լազար Թուման փրկանք և Փանահ-խանի որդի Իբրահիմ-ապային պատանեղ է առնում և գնում Պարսիստանն *)։

Հայ մեղիքները գոգու մնացին Պաթալի-խանից՝ Փանահ-խանն էլ անկի Թշնամացաւ իրենց հետ, որովհետեւ նա գիտէր որ մնայն իրենց մեհնաուութեամբ Պաթալի-խանը կարողացաւ յաջաւթիւնը տանել, ուստի և հետացան գնացին քաջ Թէշմուրազ իշխանի (հետակի հոր) ձառ և աւարաբեկին նրան միանալ իրենց հետ Փանահ-խանի իշխանութիւնը ոչնչացնելու։ Թէշմուրազ սիրով յանձն է առնում, որովհետեւ ինքն էլ Թշնամացած էր Փանահ-խանի հետ։ 1762 թուին Վրաց և Զաջոց զորքը պաշարում է Ասկարանի բերդը և Դարգար գետի ափին նախատանար տալիս Փանահ-խանը յաջմում է և փախում Պարսիստան, բայց Խուզափիլիին չհամարքի **) ձառ՝ Դաքի Մահաւան և Թիւլլի-Արգան քաղերից բռնում է և յետ բերում։ Մեղիք-Զահնազար Բ. էլ, որ Մեղիք Միրզախանի հետ ամրացած էր Զուշու բերդում՝ փախում ապատանում են Աւետարանոց ամրոցում։ Զաջոց և Վրաց զորքերը պաշարում են այս բերդը և մի քանի օր կռուելոց յետոյ առնում, աւերում, կողոպտում և Մեղիք-Զահնազարին ու Մեղիք-Միրզախանին են գերի բռնում։

Թէշմուրազը Թալանելով ու աներկով ընդհանրապէս Փանահ-խանի երկրները՝ պանց իշխանութիւնը տալիս է Մեղիք Յովսէփին ու Մեղիք Ալամին և ինքը ուղում է վերադառնալ, տանելով իւր հետ Փանահ-խանին, Մեղիք Զահնազարին և Մեղիք Միրզախանին։ Հայ մեղիքները պահանջում են, որ իրենց պայմանի համեմատ Թէշմուրազը իրենց մեհը յանձնէ այդ երեք գերիներին, որոնց հետ կը վարուեն ինչպէս իրենք կը կամենան։ Ասիայն Թէշմուրազը իւր խառանով կատարումը ձգձգելով՝ վերադառնում է Թիֆլիս և մեծ փրկանքներ տանելով այդ երեքին էլ արձակում։

Մեղիք Յովսէփ և Մեղիք Ալամ տառախ վշտացած Թէշմուրա-

*) Աշխեղոյալ։

**) Տրապիկ քաղ։

գի խաղբայութիւնը՝ գիծում են ժողովանի կառավարիչ նաղի-Յելէրի-խանին և առաջարկում, իրենց հետ միանալ Քէլձուրաղեց գիւժ լուծնու։ Սա սիրով յանձն է առնում, որովհետեւ ինքն էլ թշնամի է եղել Քէլձուրաղին։ Սրանց միացեալ զօրքը արշաւում է դէպի Քիճիս, սակայն Գանձակի մօտ հանդիպում է վրաց զօրքին, որ ընդհատումն ունենալով Գանձակի Զահվերդի-խանի հետ՝ նրան գերի էր բռնել։ Միացեալ զօրքը յարմարում է վրաց զօրքի վրայ՝ բարդում, և յետ փախցնում, իսկով Զահվերդի-խանին և այն ահազին աւարը, որ նրանք խնդ էին Փանահ-խանից։

Նալ մեղիքները ազատում են Զահվերդի խանին, որով և՛ բարեկամութիւն են հաստատում նրա հետ, և մի առ ժամանակ մնում Գանձակում։

Այս միջոցում Զահվերդի խանը միջնորդ է հանդիսանում Փանահ-խանի և հայ մեղիքների մէջ և աշխատում է նրանց հաշտեցնել։

Մեղիք-Յովսէփը և Մեղիք-Ազամը քսան տարուայ պատերազմներից սաստիկ վնասուած և ժանձքացած՝ համաձայնում են և ի նըշան հաշտութեան Մեղիք Յովսէփը առնում է Մեղիք Զահնապար Բ. գուտոր Ամարանին (Մարիամին) իւր որդի Բէկչարին կնութեան։ Փանահ-խանի հետ հաշտութիւն են կնքում հետեւեալ պայմաններով՝

ա) Փանահ-խանը տէր է լինում ձուլիք-բերդին, առանց իրաւունք ունենալու միջամտել մեղիքների երկրի և հպատակների գործերի մէջ։ բ) Նիժէ հարկաւոր լինի պատերազմ արտաքին թշնամիների հետ՝ պէտք է վնասի ընդհանուր համաձայնութեամբ։ գ) Փանահ-խանը ինքնակրօն ոչ չէի հետ պատերազմելու իրաւունք չլիտի ունենայ։ զ) հայոց մեղիքների երկրներից հաւաքուած հարկերը պէտք է գործ գրուեն տեղային պէտքերի համար։ ե) Փանահ-խանը Կարաբաղում նոր նուաճումներ անելու համարձակութիւն չլիտի ունենայ հայն *):

Այս պայմանները Փանահ-խանը քանի կենդանի էր պահպանեց, տակաջն նրա որդի և յաջորդ Իբրահիմ խանը բոլորովին ուշադրութիւն չդարձրեց և շատ անգամ խնդրեց Գանձակի Զահվերդի խանից, որ իւր մօտ եղած մեղիք Յովսէփին և մեղիք Ազամին յանձնէ իրեն։ Սակայն Զահվերդի խանը չկատարեց նրա խնդիրը, որի պատճառով այս երկուսի մէջ յարաբերութիւնը խորուեց, մինն ոչին ժամանակ Զահվերդի խանը չէր թող տալիս այս մեղիքներին իւր մօտից հեռանալ, այնպէս որ մեղիք-Յովսէփը սաստիկ զգուած՝ մի օր թողեց ամեն ինչ և փախաւ գնաց վրաց ներսից թագաւորի մօտ և նրան զգուրեց Զահվերդի խանի գէժ։ Ներսից թագաւորը նայեալս թշնամացած լինելով Զահվերդի խանի հետ՝ օգուտ քաղեց այն հանգամանքից,

*) Բաճիճի. խան. մեղիքութիւններ. Բ. ապ. եր. ՅՃ.

որ միջուանի նիւթին խանք պատերազմ է: գնացել Զահվերդի խանի վրայ և Երբանյան-խանն էլ միա կարից յարմարուել է Դաննակի գլխաց, ուստի Մեկիք Յովսէփին զապահեցի զօրքեր և իւր պատուաւոր ծառաներից միմեմ Իւանէին տալով ուզարկեց նրա վրայ: Այս միջոցին Դաննակի և Ղապխու միմեմ բնափուսած ծառայակն կոչուած թուրք ջեղը, որ եկեմարիւում էր Դաննակի խանին, նրանից ապստամբում և ձառնում է ներակի իշխանութեան տակ: Այսպիսի նեղ հանգամանքում Զահվերդի խանը գիտում է նաքեցի լեզգիներին և մեծ խոտաններով նրանց օգնութեան կանչում: Դիմում է նաև չրքախաչ խաներին, բայց միայն Երևանի խանը մի փոքրիկ ցանց է ուզարկում: Աշակով որ իւր ոյժերը շատ փոքր են այս երեք թշնամիների հետ կռուելու: Համար՝ Զահվերդի խանը հաշտութիւն է կնքում նիւթին և Երբանյան խաների հետ և նրանց յետ զարմնում Այս միջոցին Յովսէփը գնա ևս Զամշադնումն էր, ուր գիմեցին քերականից Զրաղ և Այթա փախտախանները և պատմեցին, թէ Զահվերդի խանը վարդապետով փախտարել իւր հրախրած լեզգիներին՝ նրանց ուզարկել էր Երևանի կողմերը թալանելու: Դեղատաշ ծովի ափին որանք հանդիպում են քերականիներին, որ Երևանի խանից ապստամբելով գնում էին Տալաֆա՝ Փանահ-խանի որդու իշխանութեան տակ ձառնելու: Այստեղ սրբանց մէջ կռիւ է տեղի ունեցել, և լեզգիները թալանել և զերել են շատերին, որանց մէջ և 20 հայ բնուանիք: Արդ խնդրում էին, որ Մեկիք Յովսէփը օգնութեան հասնէ և զերիներին աքստէ: Մեկիք Յովսէփը յարգում է նրանց խնդիրը և Իւանէի ու Զամշակի Ալլահմերգի սպեանի հետ բնկնում է լեզգիներին յետեից և Գետաքակ գիւղի ձառ մեծ ջարդ տալով նրանց, բոլոր զերիներն ու աւարը յետ է խլում: Լեզգիները յաջմեում և բոլոր աւարից զրկուած փախչում են իրենց երկիրը: Այս լսելով Զահվերդի խանը մարդիկ է ուզարկում փախտախանների յետեից և յորդորում է իւր ձառ զառնալ, որպէս զի ինքը կարողանայ նրանց շահել: Նրանք լին համաձայնում յետ զառնալ, այց կրճեքը ձեմելով պատասխանում են, թէ Զահվերդի խանն եղաւ իրենց թշուառութեան պատճառը և թէ իրենք մի որ վրէժը կը հանեն: Իսկ միջառորուածներից ու փախտախաններից մի քանիք վերադառնում են Զահվերդի խանի ձառ, որանց նա ուտետ, հանգրծ, մի է տալիս և թոխչի նշանակում բռնիքիւ:

Սրբ նրանք հանապազ են բնկնում զանմալեցիները բնկնում են նրանց յետեից և կողպում են նրանց, որովհետև իրանք շատ անգամ կողպաւուել էին նրանցից: սակայն Զահվերդի խանը մարդիկ է ուզարկում որ աւտիկ ձեմելով յետ են բերում այց զանմալեցիներին, և Զահվերդի խանը նրանցից շատերի քիմն ու աղանքները կտ-

բառեկ է տալիս։ Այս փարձունքի համար գանձակեցիները պիտու են սաստիկ առեկ ձահվելոյի խանին։ Մի քանի օրից յետոյ ձահվելոյի խանը կանչում է Գանձակի մեծամեծներին և նրանց առում է թէ ինձ զրամ տաւէք, որովհետեւ լեզգիներին փարձաբութիւն խառաջայ և յոտի, որով նրանց թշնամացրի ինձ հետ։ այժմ գէտք է տամ մէկ էլ ուզում եմ որդուս ամուսնացնել և զրամ յունիմ։ Քաղաքի մեծամեծները առանց որոշ պատասխան տալու զուրս են գալիս նրա ժամից և իրենց մէջ խորհուրդ անելով տալիս են նրա պահանջած գումարը։ Սակայն մի երկու օրից մի երեկոյ բոլորը հաւաքուելով յարմարում են ձահվելոյի խանի սան փայ, բոլորին կոտորելու նպատակով։ Այս զաւաթութեան ժամին ձահվելոյի խանը միայն մի ժամ առաջ լսելով՝ աւելում է իւր որդուն և մերկ ու բարբի փախչում է Զանքա, մեղիք Աղամի ժող, որ իրեն բարեկամ էր։ Խանի միւս որդիքը և մի կինը, որոնք սարը ամուսանաց են գնացած լինում, այս բոլոր լսելով փախչում ապահւնում են Արեւանի խանի ժող։

Գանձակեցիները անմիջապէս հրաւիրում են Փանահ խանի որդի Իրբահիմ խանին, որ սիրով յանձն է աւելում և գալիս է Գանձակի ձահվելոյի խանը մեղիք Աղամի մեծնաւութեամբ նստակ է գրում շաժաղկեցիներին, որոնք իրենցից ապստամբել էին, և աղերսում է նրանց իրեն օգնութեան հասնել։ Սրանք յարգում են նրա խելիքը և շուտով գնում են նրա ժող։ Դիմում է նաև Ներակի թագաւորին, ու ձերտանքի նիւստին խանին և օգնութիւն հաջցուծ Նոյն խնդիրը աւելում է նայեցէս հարեցի լեզգիներին, խոտուանալով իւրաքանչիւր անձին 5 թուման Եւ առանց ապստելու օրանց օգնութեանը՝ շաժաղկեցիներին և մեղիք Աղամի հետ յարմարում է Գանձակի փայ և բազում պատեալաբեկ Իրբահիմ խանի հետ։ Այս ժամանակ մեղիք Յովսէփը Ներակի թագաւորի կարգադրութեամբ փայց զօրքով գալիս է ձահվելոյի խանին օգնութեան։ Այս լսելով Իրբահիմ խանը թաքնում է ձահվելոյի խանի պալատն ու կայքը և իւր հետ աւելելով խանի մի կինը, որ մնացած էր Գանձակում, վերադառնում է Զուշի։ Նրա հետ գնում են իրենց բնականներով և այն գանձակեցիք, որոնք այդ զաւաթութիւնը տարբերով հրաւիրել էին Իրբահիմ-խանին։

Զուտով հասնում են և հարեցի լեզգիներն ու ձերտանի նիւստին խանը։ Նեղգիները բռնում են ձահվելոյի խանին և խոտի պահանջում են որ վնարէ իրենց թէ առաջին և թէ այս անգամ խոտացած փարձաբութիւնը։ ձահվելոյի խանը անհարացած փախչում է նիւստին խանի փանը, և առ սկսում է համոզել լեզգիների գլխաւորներին, որ այդպէս պահանջող չլինին, սակայն նրանք ոչ մի ուշադրութիւն չեն դարձնում և պահանջում են թոյլ տալ աւարել կամ Զանդաղինը և կամ Քիլիսա-

բնեղը, կեանքն իսանք աննարպած փախչնում է Ջահվերդի խանին վրայ բանակը, մեղիք Յովսէփի մօտ, և սա խիստ կերպով սկսում է խօսել լեզգիների հետ: Այս պատճառով նրանք զայնս բանափում են Փիլիսաքենդի հանդէպ, ժողովութիւն ունենալով նրան աւարել: Այս միջոցին Ջահվերդի խանը մի փոքր գումար է գտնում և տալիս է լեզգիներին և միջնորդներով ու աջակցելով գոհացնում նրանց և յետ դարձնում: Մեղիք Յովսէփը վրայ գործով Ջահվերդի խանին ձրացնում է Գանձակի բերդը և այստեղ բաւական միջոց մնում է կարգը վերականգնելու և ապա վերադառնում է Ներսէյ Թազաւորի մօտ:

Այս յաջութիւնների պատճառով Ներսէյ Թազաւորը Գեոտաշէն գիւղը նուիրում է Մեղիք Յովսէփին, ուր նա իւր մարդկանցով պիտի ապրէր առանց կախում ունենալու Ջահվերդի խանից:

Այս պատճառով Ջահվերդի խանը անելի ևս դիտարկում է մեղիք Յովսէփի հետ և մի առիթ է փնտռում նրան գնաւելու. մի որ նրա երէց որդին, Մահմեդ-Հասան-խանը, հօր համանով աւանում է զօրքը և հաշակելով թէ գնում է Կուր-գետի կողմը, ուր խոր, լեզգիներ են երևացել՝ կէս զիշերին փոխում է ճանապարհը և յանկարծ ընկնում մեղիք Յովսէփի վրայ: Գեոտաշէն գիւղում և սխում կոտորել նրա բանակը, Իսկոյն մեղիք Յովսէփի որդի քաջ և արի Բէկդարը վեր է թռչում և սարն առած միայնակ զուրս է վազում և ընկնում Հասան-խանի զօրքի վրայ. հայրը և ծառաներն էլ օգնութեան են հասնում և կոտորելով զուրս են քշում յարձակուողներին, ապա խոնց բոլոր զօրքը առած մեղիք Յովսէփը զուրս է գալիս խանի զօրքերի ղէմ և մեծ կոտորած տալով փախչնում: Իսկ նրանց զօրքի մէջ եղած հաշերին խնայում են և ձայն տալիս, որ հեռանան անօրէններէջ: Մահմեդ-Հասան-խանը մեծ անօթ համարելով յաջութեան յետ գտնալը՝ սգրով յետ է դարձնում փախչողներին, խոյ ով որ չէր յետ դառնում կռուելու, նրան ինքն էր սպանում:

Այսպիսով պատերազմը կրկին ստատկանում է, և մեղիք Յովսէփը կոտորելով առաջ է անցնում, մինչև Գանձակի բերդի գուռը, որը պաշարած պահում է մի քանի օր շարունակ:

Այս միջոցին Ջահվերդի խանը գիմում է Ներսէյ Թազաւորին և խնջում հեռացնել մեղիք Յովսէփին. սա էլ գրում է մեղիքին, որ թողնէ զաշարուժը և քաշուի իւր հաշերն Իգլիմիդորդ զաւառը. որպէս զի այդպիսի կռիւներ աչկես չպատահին: Իջարհիմ-խանն էլ հաշտում է նրա հետ և հրաւիրում է նրան վերադառնալ իւր երկրը, Իգլիմիդորդ, երդուելով որ աչկես արշաւանքներ չի գործի նրա երկրի վրայ:

Մեղիք Յովսէփը գնում է Իգլիմիդորդ և այստեղից յաճախ

յարձակումներ է գործում Գանձակի երկրի վրայ և մեծ վնասներ է պատճառում ^{*)}).

Մեղիք Աբամն էլ մեղիք Յովսէփին հետեւելով հաշտում է եք յաշիմ-խանի հետ և վերադառնում իւր երկիրը Զարեհը:

Աբսրան պատերազմներ վարելուց յետոյ մեղիք Յովսէփը մեռնում է 1776 թ. և թաղւում է իւռեկի փանքի մօտ:

Մեղիք Յովսէփը երկու որդի ունէր, Բէկար և Արով: Նրա մահից յետոյ նրան յաջորդում է Բէկարը, որ սակայն երկար չի իշխում: Մեղիք Բէկարը յաջմանդամ, բարձրահասակ, քաղ և արի մարդ էր: Նա կարգաւ էլ գիտէր, որ այն ժամանակ մեղիքների մէջ հաղապետ երեւոյթ էր Քերականութիւնը նրան ուղարկել էր Սիմէոն կաթողիկոսը ^{**)}:

Նա մասնակից էր լինում իւր հօր պատերազմներին և զեռ նրա կենդանութեան ժամանակ ինքնազուխ գործում էր և կռաւարում: Բայց գժադադարս նրա կռաւարութիւնը երկար չտևեց՝ նա ընկաւ լեզգիների զէմ պատերազմ մղելիս Գէօրան գիւղի մօտ:

Այդ անպարտելի քաջի անակնկալ մահը Ժողովուրդը այսպէս է բացատրում:

Միւրջեռ քաղ Մեղիք-Բէկարը, նստած իւր սեպիոյ մին, հրաման էր ուղարկում, որ Բորսանկում բանակած իւր հինգ հարիւր զինուորները շտապեն իւր յետեւից հասնելու, որպէս զի շախմատն լեզգիների առաջնորդ Բահարլիների գլուխը՝ նրա մայրը, խաղաղատէր Զեքիբնարը, գուրս է զայիս առաջը և աղերսում է, որ լցնայ պատերազմ, որովհետեւ ինքը գիշերը փառ եղալներ է տեսել և այժմ էլ աաստիկ տխուր է: Արդին չի լսում մօրը, և երբ առ միտ տանկից բռնած ուզում է թռնի արգելել՝ մեղիքը հրում է նրան, փայր ձգում և ինքը առաջ անցնում: Արդու այս անօրինակ կոպտութիւնից յուզւում մայրը անիծում է նրան, թէ յետ լքանաս:

Մեղիք-Բէկարը գնում է առաջ, իւր ապաստարանների ուղիով: Թեմք, երբ հասնում են Սաֆի-քիւրդ գիւղի ստորոտը՝ մեղիքը իջնում է միտց և հրամայում է սպանել, որ զօրքը գայ: Նստած մի Ժայռի վրայ՝ նա տխուր ծածկում է, և երբ հետուից բարձրանում է զօրքի միերի փռչին՝ հրամայում է իւր մարդկանցը մի քիչ հայ ուսել, որ նրանց զայիս անմիջապէս նանապարհ ընկնեն: Ինքն էլ մի օդ է խմում և մի կտոր զաքիայ գնում թերանը, բաց առ կույ չի գնում: Նստում է, փայր թափում և տխուր նախազգացութեամբ նստելով մին

^{*)} Ինտալցնում Մեղիք-Յովսէփի շինած միթահանքն ու ջրաղացը գերբն ապրիներս Մեղիք-Բէկարեան ժառանգները ծախեցին Մեղիք-Մեհալսի ^{*)} Գանձակին:

^{**)} Գիւրան հայոց պատմ. Է. Գ. երես 535.

առաջ է գնում կուսի դաշտը. այստեղ մօր անէ՛նքը կատարում է, և նա ընկնում է հրացանի գնդակից...

Բայց խնայէ՛ս Մելիք-Քէլկարի կեանքի մէջ հետեւեալ սիրացնե վէպն է տեղի ունենում.

Մելիք-Քէլկար Բ. ամուսնացած էր Մելիք-Քանապար Բ-ի դուստր Եւսեբեանի (Մարիամի) հետ, բայց չնայելով դրան՝ նա պահում էր մի սիրունի Բալա անունով. Սրա համար նա Քարխափուտի ձորում մի գնդակից աչդի էր անկել և ամարանոց կառուցել. Եւս շինութեան հետքերը մինչև այժմ էլ կան, և մրգատու ծառերը խառնուելով փայլի ծառերի հետ, բունել են ամբողջ ձորը, որի միջից կարկաշելով հասում է մի փոսի.

Երբ մելիքի սրինաւոր կինը լսում է ամուսնու զաւաճանութեան մասին՝ սաստիկ յուզուած, տանում է օրօրոցը, որի մէջ քնած է լինում փաշրքիի Գրիգորը, և գնելով սկեսրոջ առաջը՝ առում է, «Բանի որ քո տղան մի աղաթնի է սիրում՝ Մելիք-Քանապարի աղջիկը այստեղ գործ չունի, վերցրու թողա՛ւ. Տիկին ներքինաւոր աշխատում է խաղաքեցնել նրան, խոտանալով ուշիկ նանապարէի բերել օրդուն. Յախալն ինքը Մարիամը, որ իւր հօր նման միջոցներէ մէջ խորութիւն գնել չգիտէր՝ վաճում է ինքը զրա առաջն անել, ուստի և կաշառում է իրենց կարա ծառային, որ տղան մելիքի սիրահուռն. Որտեղում են այն գիշերը, որի յաջորդ առաւօտը մելիքը պատրաստւում էր պատերազմի ելնելու. կարան ժոնում է Բալայի սենեակը և քնած միջոցին նրան խեղդում է՝ հէնց նրա երկար ձագերով և ապա տանում մի հօրի մէջ ձգում. Ըստատեան, երբ մելիքը մի նստած շտապում էր գնալու՝ տարածում է Բալայի սպանման լուրը.

«Երբ էր վերադառնում, ես էր գտնեմ սպանողներին՝ առում է նա և գնում.

կարան տարափում է այս խաղաքից, նա գիտէր, որ մելիքը կարող է իմանալ, թէ ով է սպանել և այն ժամանակ ոչ միայն իւր գլուխը, այլ և իւր ամբողջ ընտանիքը գո՛ւ էր գնաց նրա վե՛ժխրեղբորութեան. Ուստի և ո՛հիրից ո՛հրի անցնելով՝ պատերազմի խառնուրդի ժամանակ հրացանի մի գնդակով փայր է գործում քաջին և ինքը առաջինը վրայ փաշկով՝ գրկում գիտել և նախուելու մէջ փաթաթած գնում միու վրայ ու բերում տուն...

Մելիք-Քէլկարը որդի չունենալով՝ մելիքութիւնը անցնում է նրա եղբորը, Մելիք-Արսիին. Սա մի քաջ, պատերազմաւէր, եռանդուն նախաձեռնող և անխոնջ անձնաւորութիւն էր *).

Սրա ժամանակ ռուսաց ազդեցութիւնը Կովկասում աւելի ևս

*) Կովայեանի. ԱՅԿԱ ԲԱՅ. ԱՐԿ. ԿՈՅ. Դ. Ի. № 54.

գործարարել էր, և Կոստային՝ Կայսրուհին մտածում էր տիրել ամբողջ Ցանկատանին և Կոստանդնուպոլիսը զարմնել քրիստոնեական պետությունների մայրաքաղաք, ինչպես և Անդրիոպոլիսում վերականգնել երկու քրիստոնեական տերութիւններ, Հայոց և փայտ, որ միայն Ռուստատանից Կայսրուհի ունենային, Այս մտքի իրագործումը չանձնուած էր իշխան Կ Պետեովիկին, որ ջանկանալով կրել Հայոց թագաւորութեան թագը՝ որտով կպած էր գործին և իշխան Յովսէփ արքեպիսկոպոս Արդութեանի միջոցով անձանձրոյցի գործում էր և արդէս պէ հրապարէ միւս զաւառներին ևս առաջ Կոմանաւորութիւնը խնդրելու՝ իշխան Պետեովիկը մեծամեծ չնորհներ էր արել փայտ Լեւոնի թագաւորին, որ և 1784 թուին երգուել էր Կոստայիմ լինել առաջ զաւին:

Այս միջոցին գեներալ Պ. Ս. Պետեովիկը գրում է մեկիւ-Յովսէփին, թէ ինքը հրամայել է առաջ գործին՝ Յարմաշէփի հրամանաւորութեամբ գնալ Վրաստան, արդ թող ինքը պատրաստուի իւր Կոստանիկերով գուրս գալ Ղարաբաղից, և որովհետեւ մեկիւ-Յովսէփը կենդանի չէր՝ այդ պատճառով այս նամակը ստանում է մեկիւ-Ֆրիգանը:

Նոյնպիսի նամակներ ստանում են և մեկիւ-Ազամ Իսրայէլեանը, Մեկիւ-Դանիէլ Մեկիւ-Քէփեանը, որոնք Արտի հետ ժողով են հաւաքում Դանձասարի փանքը և Յովհաննէս Կաթողիկոսի հետ միասին, 1781 թուի զեկտեմբերին խնդրողական նամակներ են ուղարկում Կայսրուհուն, Պաշ Պետեովիկին և Յովսէփ Եպիսկոպոսին, որոնց պատասխանն էլ ստանում են 1782 թուի յունիսին Այս միջոցին քիչեւ մեկիւ Ազամ Իսրայէլեանը մեռնում է, Յովհաննէս Կաթողիկոսը, Մեծում Ազամեանը, Արտի Յովսէփեանը, Մեկիւ-Քէփեանը կրկին նամակներ են ուղարկում Կայսրուհուն իրենց Դանիէլ և Դարբիէլ մարդկանց մեքով, որոնց պատասխանն էլ իւր ժամանակին ստանում են: Այս բանը իմանալով Իրանիմ խանը՝ 1784 թ. նոյեմբերի 3-ին հրապարկում է իւր մօտ Յովհաննէս Կաթողիկոսին և քիչեւ մեկիւ-Քէփեանին ու իւզապիւններին, կեղծելով իբր թէ ոչինչ չգիտէ, Այս հրապարկումները գալիս են՝ սպանել է ապրի Յովհաննէս Կաթողիկոսին, իսկ այս եղբայր Սարգիս Եպիսկոպոսին, միւս երեք եղբայրների և մեկիւ-Մեծումին բանտարկում է Ջուշու բերդում և 9 ամիս և 6 օր այնտեղ պահում:

Միևնոյն ժամանակ հրամայում է թաղանել Դանձասարի փանքը:

Մեկիւ Արտի էլ ուղևորուել է զէպի Ջուշի, սակայն Ասիա-բանի մօտ լսում է թուրքերից, որ խանը բանտարկել է մեկիւ-Մեծումին, ուստի անմիջապէս յետ է գառնում և Ֆրիգոնի և իւր ըն-

տանիքի հետ փախչում Թիֆլիս, ներառ թագաւորի մօտ, ուր և գալիս է մեղիք-Մեծւումը, փախչելով բանօղի:

Վերապէս 1787 թ. ռուսները օգնութեան են հասնում և Բուրնաշով գնդապետը ռուսաց զօրքով և ներառ թագաւորը իւր 5000 զօրքով գնում են Իրրաւին խանի վրայ: Սրանց հետ են լինում մեղիք Արմուր, մեղիք Ֆրիգոնը և մեղիք Մեծւումը: Սրանք բոլորը իշ. Յրքելիանի հրամանատարութեան տակ գալիս են մինչև Դաննակ, բայց այստեղ յանկարծ գնեւերալ Բուրնաշովը հրաման է տաւում անմիջապէս վերադառնալ Ռուսաստան, որովհետև չազնի էր երկրորդ ռուս-աւանդական պատերազմը: Ներառը ռուսաց զօրքերի հետ յետ է դառնում. նրանց հետ են գնում և մեղիքները, ապառն ճանապարհին մեղիք Ֆրիգոնը ընկնում է Իրրաւին-խանի մարդկանց մեռալք, որոնք սաստիկ տանելում են նրան, մինչև որ նրա ձեռքըցաւը Ջուճուղը 10,000 ռուբլի փրկանք տալով ազատում է նրան *):

Իրրաւին-խանը այսպէս անակնկալ կերպով ազատուելով ռուսներից՝ աւելի ևս բռնանում է. թաղանում աւելում է Եղիքմիդորդն ու Ջրարեքը, աւաղիւնի վրայ մեղիք է նշանակում Խարայէլին, իսկ երկրորդի վրայ Դիւլ-Լափտալ զիւղի Ռուստամ-բէկին: Մեղիք-Մեծւումի մօրն ու մեղիք Արմուրի ընտանիքից մի քանի հոգի բռնում և տանում է Ջուշի Այս հաղանքների ժամանակ այս երկու գաւառներից մօտ 500 տուն փախչում են և գաղթա վերաբնակում Ջաւրորում, Դաննակի մօտ:

Մեղիք Արմուր և մեղիք Մեծւումը Թիֆլիսից Յովսէփ արքեպիսկոպոսի միջոցով նորից գլխումն են անում կայսրուհուն, խնդրելով խնայալէս օգնել իրենց գոնէ մի փոքրաթիւ զօրքով, որովհետև իրենք կարող են նրանց ահարկու անունով սննդացնել պայտից դուրսիւնը և ընդել Ջուճուայ խանութիւնը: Իսկ եթէ օգնութիւն չգտնուի ինի՝ Թոյ տան իրենց գաղթելու հասցից ծովի ափերի մօտ, Դերբենդի շրջակայքը, ուր իրենց տրուելիք երկիրները իրենց սեփականութիւն համարուին և իրենք մեղիքներն ու նրանց ժառանգները լիազատար իշխանութիւն ունենան իրենց հաւատակներին տիրելու:

